ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/282

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.10.2021թ. թիվ 26/26-1/16081-2021 գրությամբ Ա/Ձ Միհրան Աբրահամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Արթիկի համայնքապետարանի 27.09.2021թ. թիվ 1269 գրության հիման վրա, 04.10.2021թ. թիվ 26/26-1/16081-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Միհրան Աբրահամյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Միհրան Աբրահամյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Միհրան Աբրահամյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Միհրան Աբրահամյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/282 ընթացակարգի շրջանակներում 29.10.2021թ. ժամը 09:34-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Արթիկի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Արթիկի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.09.2021թ. թիվ 1269 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արթիկի համայնքապետարանի և Ա/Ձ Միհրան Աբրահամյանի միջև 09.08.2021թ. կնքվել է ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր, սակայն Ա/Ձ Միհրան Աբրահամյանի կողմից չեն պահպանվել ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի 2.4.1, 2.4.2, 2.4.4 կետերը, ինչպես նաև ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 Հավելվածով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետները, որը սահմանված էր մինչև 29.08.2021թ.: Ա/Ձ Միհրան Աբրահամյանի կողմից մինչև օրս չեն մատակարարվել ապրանքները, ինչպես նաև չի ներկայացվել ոչ մի հիմնավորում ապրանքների մատակարարման ժամկետների հետ կապված խախտումների վերաբերյալ: Ուստի հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, խնդրում եմ Ա/Ձ Միհրան Աբրահամյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/282 ընթացակարգի շրջանակներում 29.10.2021թ. ժամը 09:34-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/282 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/282 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Արթիկի համայնքապետարանի և Ա/Ձ Միհրան Աբրահամյանի միջև 09.08.2021թ. կնքվել է թիվ «ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է ապրանքի մատակարարման հետևյալ ժամկետը՝ Պայմանագրի կնքման օրվանից 20 օր:

3. Պատվիրատուն Ա/Ձ Միհրան Աբրահամյանին ուղղված 25.09.2021թ. թիվ 1244 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով Արթիկի համայնքապետարանի և Ա/Ձ Միհրան Աբրահամյանի միջև 09.09.2021թ. կնքված ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի 2.4.1, 2.4.2, 2.4.4 կետերը, ինչպես նաև ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 Հավելվածը, ապրանքների մատակարարման ժամկետ էր սահմանված 29.08.2021թ.: Սակայն, Ձեր կողմից մինչև օրս չեն մատակարարվել ապրանքները, ինչպես նաև չի ներկայացվել ոչ մի հիմնավորում ապրանքների մատակարարման ժամկետների հետ կապված խախտումների վերաբերյալ:

Ուստի հիմք ընդունելով ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի 2.1.1, 2.1.7.1 կետի բ) ենթակետը, Արթիկի համայնքապետարանը ծանուցում է Ձեզ ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 27.09.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.10.2021թ. թիվ 26/26-1/16081-2021 գրությունը, Արթիկի համայնքապետարանի 27.09.2021թ. թիվ 1269 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի համաձայն՝

1.Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2.***Պարտավորությունները ծագում են պայմանագրից***, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Արթիկի համայնքապետարանի և Ա/Ձ Միհրան Աբրահամյանի միջև 09.08.2021թ. կնքվել է թիվ «ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է ապրանքի մատակարարման հետևյալ ժամկետը՝ Պայմանագրի կնքման օրվանից 20 օր:

Պատվիրատուն Ա/Ձ Միհրան Աբրահամյանին ուղղված 25.09.2021թ. թիվ 1244 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով Արթիկի համայնքապետարանի և Ա/Ձ Միհրան Աբրահամյանի միջև 09.09.2021թ. կնքված ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի 2.4.1, 2.4.2, 2.4.4 կետերը, ինչպես նաև ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 Հավելվածը, ապրանքների մատակարարման ժամկետ էր սահմանված 29.08.2021թ.: Սակայն, Ձեր կողմից մինչև օրս չեն մատակարարվել ապրանքները, ինչպես նաև չի ներկայացվել ոչ մի հիմնավորում ապրանքների մատակարարման ժամկետների հետ կապված խախտումների վերաբերյալ:

Ուստի հիմք ընդունելով ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի 2.1.1, 2.1.7.1 կետի բ) ենթակետը, Արթիկի համայնքապետարանը ծանուցում է Ձեզ ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 27.09.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.***

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են օրից ավելի,

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ պարտավորությունները ծագում են պայմանագրից, հետևաբար՝ Պայմանագրով էլ սահմանվում են պարտավորությունները կատարելու կարգն ու ժամկետները և դրանց մասով խախտումներն էական համարվելու պայմաններն ու դեպքերը, մինչդեռ՝ 09.08.2021թ. կնքված թիվ «ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-21/11» պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են օրից ավելի, այսինքն՝ Պայմանագրով սահմանված չէ թե քանի օրից ավելի ապրանքի մատակարարման ժամկետները խախտելու դեպքում, նշված խախտումը կհամարվի էական, որպիսի պայմաններում հնարավոր չէ արձանագրել Մասնակցի կողմից Պայմանագրի էական խախտման փաստը:

Նման պայմաններում գտնում եմ, որ առկա չեն Ա/Ձ Միհրան Աբրահամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 04.10.2021թ. թիվ 26/26-1/16081-2021 գրությամբ Ա/Ձ Միհրան Աբրահամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**